

5.1. Ժողովրդագրական իրավիճակը

«2020 թվականի վիճակագրական ծրագրով» նախատեսված է ժողովրդագրական ցուցանիշներն ամփոփել և հրապարակել եռամսյակային պարբերականությամբ: Սակայն, կորոնավիրուսային (COVID-19) համավարակով պայմանավորված, 2020թ. հունվար-մայիսի որոշ ժողովրդագրական ցուցանիշներ ամփոփվել են շտապ եղանակով և ստորև ներկայացվում են նախնական տվյալները:


2020թ. հունվար-մայիսին* կենսունակության գործակիցը՝ ծնվածների և մահացածների հարաբերակցությունը, կազմել է 111.7%՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում արձանագրված 112.9 %-ի համեմատ:

ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները, հունվար-մայիս

	Բացարձակ թվաքանակ, մարդ/դեպք			2020թ. բացարձակ ցուցանիշի փոփոխությունը, %		1000 բնակչի հաշվով, պրոմիլ		
	2018թ.	2019թ.	2020թ.*	2018թ. նկատմամբ	2019թ. նկատմամբ	2018թ.	2019թ.	2020թ.*
Ծնվածներ	13 444	13 322	12 894	95.9	96.8	10.9	10.8	10.4
Մեռելաձիներ	264	224	155	58.7	69.2	19.3	16.5	11.9
Մահացածներ	11 316	11 795	11 547	102.0	97.9	9.1	9.6	9.4
Բնական հավելված	2 128	1 527	1 347	63.3	88.2	1.8	1.2	1.0
Ամուսնություն	5 619	6 243	4 172	74.2	66.8	4.5	5.1	3.4
Ամուսնալուծություն	1 620	1 513	1 218	75.2	80.5	1.3	1.2	1.0

Քաղաքացիական կացության ծննդյան և մահվան գրանցումներն ըստ ամիսների


մարդ/դեպք



* նախնական

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎԴՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Քաղաքացիական կացության ամուսնության ու ամուսնալուծության գրանցումներն ըստ ամիսների



ՀՀ մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների, հունվար-մայիս (Ըստ քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրանցումների)

	2019թ., մարդ	%-ով՝ ընդհանուրից	2020թ.* , մարդ	%-ով՝ ընդհանուրից	Բացարձակ ցուցանիշի փոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %
Մահացածների թվաքանակը	11 795	100	11 547	100	97.9
այդ թվում՝ ըստ պատճառների					
արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (I00-I99)	6 219	52.7	6 398	55.4	102.9
նորագոյացություններից (C00-D48)	2 307	19.5	2 215	19.2	96.0
շնչառական օրգանների հիվանդություններից (J00-J99)	1 448	12.3	1 067	9.2	73.7
մարսողական օրգանների հիվանդություններից (K00-K99)	566	4.8	588	5.1	103.9
Էնդոկրին համակարգի հիվանդություններ (E00-E90)	266	2.3	228	2.0	85.7
դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից (V,W,X,Y)	408	3.5	337	2.9	82.6
վարակիչ և մակաբույսային հիվանդություններից (A01-B99)	79	0.7	71	0.6	89.9
COVID-19, վիրուս	-	-	105	0.9	...
այլ հիվանդություններից	502	4.2	538	4.7	107.2

Ըստ Առողջապահության նախարարության Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի տրամադրած տեղեկատվության, Հայաստանի Հանրապետությունում 2020թ. մարտ-մայիսին կորոնավիրուսային (COVID-19) հիվանդությունից մահվան դեպքերը կազմել են՝ 139: Ցուցանիշը տարբերվում է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) ռեգիստրի տվյալներից, քանզի քաղաքացիական կացության մահվան վերաբերյալ ակտերի գրանցման ընթացակարգով պայմանավորված, մահերի որոշ մասի տվյալները գրանցվում (ակտերը կազմվում) են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ժամանակահատվածներում, հետևաբար ճշգրտումները կկատարվեն հաջորդ հրապարակումներում:

* նախնական
144